Տաճարի և սենեկաց առաջ երեւի և աւազան ջրոյ, որոյ ջուրն այսպէս հետքն ցուցանեն, բերած է խողովակով վանքի վերեւի լերան գագաթից, ուր ցարդ երեւի ջուրն, և է աղբիւր ծառովք շրջապատած։

Այս աւազանի նոյն և վանքի հանդէպն զառ ի վայրն երեւի լինիլ այգեստեղի և շատ յարմար է այգւոյ։

Պարսպի քանդուած դրան մօտ ընկած քարի վրայ, գրուած էր.

«Ես Մատրասցի Տէր Սահակի որդի Պետրոս շինեցի Դարվազ յիշատակ իմ կենակից Մարիամին և իմ որդւոց և թոռանց»։ (Անթուական)։

Շորի մէջ՝ որով աղբիւրների ջրերը անցնում, գնում են Շամախի, եղել է վանքի ջրաղացը, որ անցել է ուրիշի ձեռք վանքի ամայութիւնից սկսած։ (30 տարի առաջ)։

Շորի միւս երեսը անտառապատ է, ոյր վասն և գարնանը զուարճալի և սքանչելի տեսարան է բացվում նայողի առաջին։ Մանաւանդ թէ սոխակների քաղցրաձայն երգերն զմայլեցնում և գրաւում են մարդոց ուշադրութիւնը[1])։

Ցիրաւի մեր լուսահոգի նախնիքը շատ խելօք են եղել, ինչ պատուական և զուարճալի տեղեր և տեսարաններ են ընտրել բնակութեան համար, կատարեալ բժիշկ են եղել։ Հայաստանի ամեն վանքերը շինուած են համարեա հովասուն և բարձրը տեղեր, քաղցր օդի մէջ և առողջարար ջրի մօտ։

Արագած լերան լանջերին շրջապատած վանքերը, նոյնպէս և Նախիջեւանայ և Սիւնեանց վանքերն վկայ և ապացոյց են ասութեանցս։

Մէյսարու վանքը ունեցած շատ վարելահողերից ունի այժմ 36 դեսեատին 2115 քառակուսի սաժեն հող և մի այգե-

---

[1]) Մէյսարու վանքումն է մնացեալ, կրթուել 1795 թուին Շամախեցի Յակոբ Առտուածաբան վարդապետը, որ 1759 թուին եղաւ Կաթող. դիկոս սուրբ Էջմիածնի Յակոբ Ե. անունով։